


Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարւանը 6 ռուբլ:
Աւանդին համարները 7 կօպէկով:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆԵՐ ԼՐԱՅԻՐ

Ներկայ 1887 թիւն

Հրատարակւում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պարագրամայով: Մեր ոտանուակը սկիական
ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱՎԱՆԵՐՆԵՐ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամաշիւկի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հա-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագրութեան հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կատարական կար-
դալութիւններ. Ամառնացած վարժուհիներ և
չամուռնացած ուսուցիչներ. Նամակ Ս. Պետեր-
բուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐ-
ՍԱ.—ՇԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Գործնական մարդկէք Ամերիկայում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՐԳԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փողովքական լուսաւորութեան մի-
նիստը չըջաւելաւ ևս ուսումնա-
րանական շրջանի երկ պ. հոգաբար-
ձուներին ուղղած

Հոգաւոր զինազինաների և պրօֆեսորներին
աշակերտների կողմը լուսաւորութեան մասին, եւ ան-
հրաժեշտ եւ համարում ընդունել այդ հիմնարկու-
թիւններում միմիայն այն երեխաներին, որոնք
գտնուում են այնպիսի անձանց հոգատարութեան
տակ, որոնք բաւարար երաշխաւորութիւն են
ներկայացնում, թէ այդ երեխաները դաժնում են
ընտանեկան կանոնաւոր հակողութեան ներքոյ, և
թէ նրանց կը տրվի անհրաժեշտ յարմարութիւն-
ներ իրանց ուսումնարանական պարագրամներին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐԱԿԱՆ ՄԱՐԴԻՔԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ինչպէս «Մշակ» նամակագրական մէկում
յայտնւած էր, «Вѣстникъ Европы» ամսագրի մա-
յիւն և յունարէ տեղաբնակներում տպուցան Մակ-Գա-
լանի հետաքրքիր յօդուածները Ամերիկայի գործ-
նական մարդոց մասին, կենսագրութիւնների ձևով:
Մակ-Գալան, որպէս անաչառ, դիտող և անկեղծ լըդ-
թակից, վերջիվերջաւ ամառային մայիսեան տետրա-
կում նկարագրում է Ամերիկայի իրանց ընդունա-
կութեանը և գործունէութեանը աչքի ընկնող
այն մարդկանց կեանքը և գործունէութիւնը, որ-
ոնք իրանց այժման դիրքին հասել են ոչ այն-
քան աղին և ուղիղ ճանապարհով, և որոնք ա-
հաղին հարստութիւն ձեռք բերելուց և նշանա-
կութեան հասնելուց յետոյ, սկսել են վարել և-
ռական կեանք և ոչնչով օգտաւէտ չեն եղել ի-
րանց համարադարձայններին: Իսկ հետևեալ, այ-
սինքն յունարէ տետրակում, Մակ-Գալան ծա-
նօթացնում է ընթերցողներին Ամերիկայի այն
գործնական մարդկանց կեանքի հետ, որոնք համ-
արին ճանապարհով են հարստութիւն ձեռք բե-
րել և համ հարուստ դառնալուց յետոյ էլ օգտա-

համար: Այդպիսով, ճշգրտեալ պահանջներով այս
կանոնը, զինազինաներ և պրօֆեսորները ան-
կազատելի կառավարաների, սպասաւորների, խո-
հարներին, լուսաւորաներին, մանրագիտականների
և դրոշմ նման մարդոց երեխաները ընդունելուց,
որոնց երեխաներին, բացի արտասովոր ընդունա-
կութիւններով օժտուածներից, միանգամայն չը
պէտք է դուրս հանել այն շրջանից, որին նորա
պատկանում են, քանի որ, ինչպէս ցոյց է տուել
բարձրագույն փորձը, այդպիսով նորա սկսում են
արհամարհել իրանց ծնողներին, սկսում են դժգոհ
լինել իրանց կեցութիւնից և թշնամաբար վերա-
բերվել դէպի կազմերի անհաւատարմութիւնը, որը
այժմ դրսեւորւում է, և որը անխուսափելի է
նոյն իսկ իրերի ընտանեկան ընթացքի պատճառով:

Ձեր գերազանցութիւններին հայեցողութեանը
թողնելով զինազինաների և պրօֆեսորներին
տեսուհիներին այդ ուղղութեամբ անհրաժեշտ հը-
րահանքներ տալը, եւ, իմ կողմից, օգտակար կը
համարէի, որ այդ հրահանքներ մէջ, ի միջի այ-
լոց, այն բանը եւ ի նկատի առնվի, որ զինա-
զինաների և պրօֆեսորներին տեսուհիները, այն
դէպքում, երբ ծնողներից կամ ազգականներից
խնդրեն կը տառաւան երեխաները ընդունելու
մասին, պարտաւոր են,—նախ քան երեխաներին
ընտելութեան ենթարկելը,—հարցուփորձ անել
նոյն իսկ ծնողներից և հարկաւոր տեղեկութիւն-
ներ հաւաքել նոյն նիւթական և ընտանեկան
կեցութեան մասին, այլ և այն մասին, թէ նորա
ինչպէս են դաստիարակել և ինչպէս են պատ-

ւէտ են եղել իրանց հայրենակիցներին, ահաղին
զուտաբեր շուկայում բարեգործական նպատակ-
ներով, օգնելով իրանց ազգականներին բարեգոր-
ծական հիմնարկութիւններ հաստատելով, հիմնե-
լով ուսումնարաններ, համալսարաններ, և այլն:
Եւ որովհետեւ անաղին և ծուր ճանապարհնե-
րով հարստութեան հասած մարդիկ մեղաւորւում են
պակաս չեն, ուստի և դրանց կենսագրութեան և
գործունէութեան հետ ծանօթանալը մեր ընթեր-
ցողների համար ուսանելի բան չէ կարող ներկա-
յացնել և մի առանձին հետաքրքրութիւն չունի:
այդ պատճառով մենք յարմար ենք դատում ծա-
նօթացնել մեր ընթերցողներին Մակ-Գալանի
նկարագրած Ամերիկայի համակրելի և օգտակար
մարդկանց կենսագրութիւնների հետ, որով յոյս
ունենք, մեր ընթերցողների հետաքրքրութեանը
բաւականութիւն տուած կը լինեն:

Ա. Բ. Ո. Ի. Ն. Ղ. Ո. Բ. Ը. Գ. Ն. Ո. Ղ. Ն. Ղ. Ն. Ղ.

Ձը նայելով որ, պատերազմից յետոյ, Ամերի-
կայիցները մէջ նկատուում է ձգտում դէպի բո-
րային խաղը, որի նպատակն է հարստանալ ի-
նչաւ աւելի անհնաւատ և աւելի բարոյական
մարդկանց, սակայն այժմ ևս չափ կան այնպիսի
մարդիկ, որոնք ահաղին հարստութիւն են ձեռք
բերել եթէ ոչ հասարակ առևտրով, սակայն անձ-
նական եւ անհրաժեշտ, աշխատանքային և օրինա-
կան ձեռնարկութեան շնորհիւ:

Խառնել իրանց երեխաներին, և այլն, և դրանց
յետոյ,—եթէ նոյն կեցութեան հանգամանքները
չեն համապատասխան վերջիվերջաւ պայմաննե-
րին,—վճակականապէս մերժել ինչիւնեք, մատ-
նանիւ անելով այն դպրոցական հիմնարկութիւն-
ների վրա, որոնց դասընթացը աւելի կարճատե և
և աւելի համապատասխան այդպիսիների շրջա-
նին, որոնք նոյն կարող են օգտաւէտ կերպով
ուսում տալ իրանց երեխաներին: Բացի դրանից,
եթէ արդէն ընդունված երեխաների մէջ վերջու-
մը երեւան դան այնպիսիները, որոնք իրանց ծը-
նողների կամ ազգականների տնային պայմաննե-
րի չնորձով վատ ազդեցութիւն գործում կը վե-
նեն իրանց ընկերների վրա, այն ժամանակ այդ-
պիսիներին պէտք է արձակել զինազինաներից
կամ պրօֆեսորներից, ուսուցչութեան չառնե-
լով այն երկու տարւոյ ժամանակամիջոցը, որը
սահմանված է զինազինաների և պրօֆեսորների
կանոնադրութեան § 34-ի մէջ, նոյնպէս և
պատիժների վերաբերեալ ձեւական կանոնները,—
այլ ի նկատի առնելով, որ զինազինաներում և
պրօֆեսորներում հիմնարկութիւններում, որոնք տանում
բանական հիմնարկութիւններում, որոնք տանում
են դէպի համալսարաններ և դէպի պետական
հասարակական ծառայութեան բարձր ասպարէզ-
ները, պէտք է ուսանեն միմիայն այնպիսի անձինք,
որոնք իրանց աշուղ ուսման հետ միասին աչքի են
ընկնում իրանց բաւարարելի և որոնք կարող են
լինել կատարելապէս բարեկրթ երիտասարդներ,
այլ և որոնք ամէն կողմից բարեյոյս լինելու մա-
սին զինազինաների և պրօֆեսորների տե-
սուհիները կարող են ապագայում էլ պատասխա-
նատու լինել բարձրագոյն իշխանութեան առաջ,
և որ ամենապակասորն է, իրանց խղճի առաջ:

Գորա հետ միասին, խոնարհաբար խնդրում եմ
ձեր գերազանցութիւններին դիմել ուր հարկն է,
որպէս զի առաջիկայ ուսումնական տարւածից
ուսման վարձը բարձրացնելի մինչև 40 ռուբլ
տարեկան, իւրաքանչիւր աշակերտից այն զինա-
զինաներում և պրօֆեսորներում, որոնք մէջ
ուսման վարձը դրանից քիչ է, և որոնց մէջ հիմ-
նարկութեան սկզբնաւորութեան ժամանակ ոչինչ
պայմաններ չեն դրված ուսման վարձի վերաբե-
րութեամբ: Ուսման վարձի այդքան աւելացնելը
անհրաժեշտ է, որպէս զի կարելի լինի յատուկ
և կամուսներով ծածկել այն ծախքերը, որոնք
պէտք է լինեն իմ ենթադրած նոր կարգադրու-
թիւնների շնորհիւ, որոնց նպատակն է արագաց-

վերցնել ամերիկական այդ «յաջողակներ»
թուրից երկուսին, որոնք հարստութեանը և աշո-
ղութեանը կատարելապէս աղին ճանապարհով
են հասել: Այդ անձնաւորութիւններն են՝ Ամերի-
կական ցիլիկի տէր ամբողջ աշխարհին յայտնի
Բարնում, և այստեղ, այսինքն Նիւ-Եթիւում ամե-
նից շատ տարածված չաբաթական լրագրի հրա-
տարակիչ Բոյթրա Բոննէր, որը միլիոնի չափ հա-
րստութիւն է դիւղել իր «New York Ledger» լը-
րագրով: Այդ երկու անձինքը ոչ միայն վատ
մարդիկ չեն, որպէս, օրինակ, Բոննէր, այլ և
այնպիսի մարդիկ են, որինակ Բարնում, որոնց
հասարակական բարեգործութիւնը խիստ մեծ չա-
փեր է ընդունում: Բացի դրանից, այդ երկու ան-
ձինքը նշանաւոր են և նրանով, որ դրանք եր-
կուսն ևս հարստութիւն են ձեռք բերել իրանց
սովորական ոյժերով, և ինչպէս այստեղ անուա-
նում են դրանց «Self-made men».—ինքնատեղծ
մարդիկ են:

Բոյթրա Բոննէր, իսկապէս առած, մինչև ան-
գամ աղղով ամերիկացի էլ չէ, թէպէտ և նա
այնքան ամերիկացի է, որ անձնապէս նրա հետ
ծանօթ լուծ ամերիկացիներից մի քանիսը զար-
մանում են, երբ լուծ են թէ Բոննէր առաջին
անգամ եկել է այստեղ իւրանդալայից 1824 թվին,
տան և հինգ տարեկան հասակում: Աւելորդ չէ,
այնու ամենայնիւ, նկատել, որ երիտասարդ իւ-
րանդալայիցը շատ չուտ խառնուում են երկրի
լուծ աղղարանութիւն հետ, այն ինչ այստեղ

նկ զինազինաների և պրօֆեսորների ուս-
ման ընթացքը և զօրեղացնել աշակերտների վրա
եղող հակողութիւնը և բարոյական ներգործու-
թիւնը:

Այս մասին պատիւ ունեմ տեղեկացնել ձեր
գերազանցութիւններին՝ հարկաւոր տնօրէնութիւն-
ները անելու համար:

ԱՄՈՒՆԱՅԱՄ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ ԵՒ ՉԱՄՈՒՆԱ-
ՅԱՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Մեր թուականը դպրոցների վարչութիւնները
նորանոր մտքեր են յղանում.—ինչպէս երևում է
զանազան կողմերից եկած տեղեկութիւններից
այդ վարչութիւնները չեն կամենում ուսումնա-
րաններում տեղ տալ ամուսնացած վարժուհիներ-
ին, իսկ օրիորդաց դպրոցի դուստրը փորձում են
փակել չամուսնացած ուսուցչիների առաջ: Հըմա-
րիտ, առաջին րօպէից զարմանալի տպաւորու-
թիւն է թողնում հայոց դպրոցների վարչութիւն-
ների այդ տեսակ բարոյ և փիլիսոփայական խը-
տ ու թ իւ ն ը, որը շատ թույլ հիւժը ունի, և որը,
բարեբաղդաբար, դեռ ընդհանուր երեւոյթ չէ դար-
ձել: Սակայն որպէս զի այդ սխալ հայեացիէտը
չը տարածվի հայոց դպրոցների մէջ, հարկաւոր է օր
առաջ ուսուցչութիւն դարձնել դրոշմ վրա, օր առաջ
ցոյց տալ այդ տեսակ պահանջների վնասակա-
րութիւնը:

Դառնանք ուղղակի հարցին: Ի՞նչ են ասում
այն մարդիկ, որոնք այդպիսի պահանջներ են
դնում ուսուցչիների և վարժուհիների վրա: Նորա
ասում են. «չարմար չէ, որ մի չամուսնացած երի-
տասարդ մարդ վարժապետի պաշտօն կատարի
օրիորդաց դպրոցում, որովհետեւ դա կարող է ա-
ռաջ բերել դասադան զրոյցներ, և ուսումնարանի
բարոյականութեանը վնասող հետեանքներ. յար-
մար չէ նոյնպէս, որ մի ամուսնացած կին վար-
ժուհու պաշտօն վարի դպրոցում, որովհետեւ նա
իբրեւ կին, յղի լինելով և դպրոցում գտնվելով,
վատ կերպով կարող է ազդել աղջիկների վրա»,
և այլն և այլն:

Համաձայնել այդ կարծիքների հետ միանգա-
մայն անկարելի է, որովհետեւ այդպիսի պատճա-
ռաբանութիւնների չնորձով.—որոնք իսկապէս մի
գրական արժէք էլ չունեն,—կարող են զոհվել
ուրիշ շատ կարեւոր և նշանակութիւն ունեցող
պայմաններ: Եւ ահա թէ ինչպէս: Նախ, միթէ
յիշատի մի մարդու բարոյական արժէքը, բարոյ-
ականութիւնը, որը հարստութեանը և աշո-
ղութեանը կատարելապէս աղին ճանապարհով
են հասել: Այդ անձնաւորութիւններն են՝ Ամերի-
կական ցիլիկի տէր ամբողջ աշխարհին յայտնի
Բարնում, և այստեղ, այսինքն Նիւ-Եթիւում ամե-
նից շատ տարածված չաբաթական լրագրի հրա-
տարակիչ Բոյթրա Բոննէր, որը միլիոնի չափ հա-
րստութիւն է դիւղել իր «New York Ledger» լը-
րագրով: Այդ երկու անձինքը ոչ միայն վատ
մարդիկ չեն, որպէս, օրինակ, Բոննէր, այլ և
այնպիսի մարդիկ են, որինակ Բարնում, որոնց
հասարակական բարեգործութիւնը խիստ մեծ չա-
փեր է ընդունում: Բացի դրանից, այդ երկու ան-
ձինքը նշանաւոր են և նրանով, որ դրանք եր-
կուսն ևս հարստութիւն են ձեռք բերել իրանց
սովորական ոյժերով, և ինչպէս այստեղ անուա-
նում են դրանց «Self-made men».—ինքնատեղծ
մարդիկ են:

Բոյթրա Բոննէր, իսկապէս առած, մինչև ան-
գամ աղղով ամերիկացի էլ չէ, թէպէտ և նա
այնքան ամերիկացի է, որ անձնապէս նրա հետ
ծանօթ լուծ ամերիկացիներից մի քանիսը զար-
մանում են, երբ լուծ են թէ Բոննէր առաջին
անգամ եկել է այստեղ իւրանդալայից 1824 թվին,
տան և հինգ տարեկան հասակում: Աւելորդ չէ,
այնու ամենայնիւ, նկատել, որ երիտասարդ իւ-
րանդալայիցը շատ չուտ խառնուում են երկրի
լուծ աղղարանութիւն հետ, այն ինչ այստեղ
նկ զինազինաների և պրօֆեսորների ուս-
ման ընթացքը և զօրեղացնել աշակերտների վրա
եղող հակողութիւնը և բարոյական ներգործու-
թիւնը:

յա կան լինելը կախված է նրա ամուսնացած լինելուց կամ չը լինելուց: Եթէ ուսուցիչ լինելու համար ընդհանրապէս, կամ օրիորդաց դպրոցում ուսուցիչ լինելու համար մասնաւորապէս, մի ուրիշ մաս աչտաբար ստեղծելին մեր դպրոցներին ինքնապատաս վարչութիւնները,—այդ ուրիշ խնդիր է, բայց միթէ, յիշատի, կարելի է կարծել անգամ, որ երկուստեք ուսուցիչը ամուսնացաւ, այնպիսի հոգեկան և ֆիզիոլոգիական փոփոխութիւններին է ենթարկուում, որ նրա առաջ այսօր կարելի է բաց անել այն դպրոցի դռները, որոնք երէկ, նրա ամուսնանալու նախորդ օրը, փակված էին նրա առաջ: Խոստովանվեցէք զէթ, որ այդպիսի մի հայեցողութեան մէջ ոչինչ հիմք չը կայ, բայց եթէ մի ձևակերպութիւն, որը զուցէ բաւականութիւն է տալիս խաւար ժողովրդին հայեցակէտերին, որը լիութիւն է տալիս պառաւական զանազան կարծիքներին: Եթէ վատ է ուսուցիչը, այդ ուրիշ խնդիր է, այդ ղեկավարը նրան հեռացնել պէտք է դպրոցից, լինի նա ամուսնացած թէ չամուսնացած, այդ մի և նոյն է. բայց ինչ խնդիր է, ինչ միտք ունի, ասուեցնել երկուստեք, զուցէ և շատ արժանաւոր և եռանդոտ վարժապետներին, ասելով՝ «դուք կին չունէք, ուրեմն և օրիորդաց դպրոց մտնել չէք կարող»: Եւ այդպիսի օրդիւկայից զուրկ դատողութիւնները չարոհանկելով՝ մեր դպրոցներին վարչութիւնները նոյնպիսի անհիմքի հայեացքներ են յայտնում և ամուսնացած վարժուհիներին վերաբերութեամբ: Չամուսնացած վարժապետներին առաջ փակում են օրիորդաց դպրոցներին դռները, իսկ երբ նոյն վարժապետները ամուսնանում են, դպրոցներին դռները փակում են նոցա կանանց՝ վարժուհիներին առաջ: Ուրեմն ինչ անի ուսուցիչը այդպիսի դրութեան մէջ, քանի որ ուսուցիչները, մեծ մասամբ ամուսնանում են վարժուհիներին հետ, մասնաւորապէս որ այդ յարմար է թէ նոցա գործունէութեան և թէ նոցա պաշտօնի տեսակէտից: Իսկ ամուսնացած վարժուհիներին անյարմար համարել մանկավարժական գործունէութեան համար՝ միանգամայն անհիմքութիւն է: Կարծել թէ երէկվայ օրիորդ վարժուհին այսօր տիկին—վարժուհի դառնալով՝ փոխվեցաւ, վատացաւ, ի հարկէ, չէ կարելի. բայց մասնաւոր չէ անել զանազան իրեր և թէ ընդհանր անյարմարութիւններին վրա,—և դրանով փակել դպրոցական գործունէութեան ասպարէզը կնոջ առաջ,—միանգամայն անհամակերպ է: Որ տեսակէտից կամենաք քննեցէք այդ հարցը, ոչնչով չէ կարելի արդարացնել այդպիսի մի ձգտում: Ո՛վ կարող է պնդել, որ յղի վարժուհին վատ աղբիւրութիւն կարող է գործել աշակերտութիւններին բարոյականութեան վրա. միթէ յիշատի նոյն աշակերտութիւնները երբ մտած վերադառնալով տեսնում են իրանց մայրերին և քորերին յղի դրութեան մէջ, դրանով զայլաբանում և անբարոյականանում են: Աւելի ճիշդ չի լինի կարծել, որ այդպիսի անբար-

ոյական ինտիմիտներ ունեն միմիայն իրանք այդպէս դատողները: Վերջապէս միթէ կարելի է ստիպել, որ մի օրիորդ չամուսնանայ, եթէ ուզում է վարժուհի լինել, միթէ արդարութիւն է ստիպել մի օրիորդին, որ նա զոհի իր մարդկային ցանկութիւնները, որ խնդիր իր սէրը, եթէ ուզում է իրան նուիրել կրթութեան գործին: Չըմարտ է, զուցէ չամուսնանալով մի երկուստեք կամ մի օրիորդ, աւելի մեծ ոյժերով կարող է նուիրվել հասարակական գործունէութեան, աւելի եռանդով և ոգևորութեամբ կարող է ծառայել մի զաղափարին կամ մի գործին,—բայց միթէ կարելի է պահանջել, որ ամենքն էլ ունենան այնպիսի իրաւական յատկութիւններ, որ զոհեն իրանց անձնական բոլոր ցանկութիւնները և ձգտումները: Երանի որ այդ ցանկութիւնները և ձգտումները պահպանելի չեն: Չը պէտք է մոռանալ, որ ամեն մի վարժուհի՝ վարժուհի լինելուց առաջ մարդ է, ունի մարդկային հակումներ. և ինչով կարելի է ստիպել, որ մի վարժուհի՝ վարժուհի լինելու համար ձեռք վերցնի բոլոր իր ցանկութիւնները, խնդիր իր սէրը, եթէ սիրում է, ձեռք վերցնի ամուսնանալու ցանկութիւնները, եթէ ամուսնանալ է ցանկանում: Այդպիսի դժուար պայմաններ չունի մեր դեռ նորաբողջ օր վարժուհիներին առաջ՝ միջոց մեր անհեռախոսութեամբ կարող կը լինենք հեռացնել ասպարիզից ամենալաւ ոյժերին անգամ: Այդ դու. բաւական չէ. փակելով դպրոցներին դռները ամուսնացած վարժուհիներին առաջ, մեր դպրոցներին վարժուհիները անկանելի դրութեան մէջ են դնում ուսուցիչներին ևս: Ուսուցիչը ամուսնանում է վարժուհու հետ, որ նրա հետ միասին աշխատելով կարողանայ ապրել և պահել իր որդեցը: 600 ռուբլի ռոճիկ ստացող ուսուցիչը ամուսնանում է մի վարժուհու հետ, երկուստեք, որ մի 500 ռուբլի էլ նա կը ստանայ, և այդպիսով կապահովեն իրանց ապրուստը: Բայց ուրիշ բան է դուրս գալիս. ամուսնացած վարժուհին պէտք է տանը նստի, պէտք է փոխ անգործութեան մէջ, իսկ խնդիր ուսուցիչը պէտք է իր 600 ռուբլիով համ իրան պահի, համ կնոջը, համ էլ աշխարհ եկող երեխաներին: Ուրեմն ինչով և ինչպէս կարող են մեր փոքր ի շատէ կրթված կանայք մասնակցել մարդու աշխատանքներին, էլ ինչով կարող են գործում, էլ ինչով նորա կարող կը լինեն թնթեւանել իրանց ամուսնիներին բնուր... Բայց կայ մի ուրիշ կարեւոր պատճառ. ևս. ամենքն էլ ցանկանում են, որ մեր կանայք իրանց անկախ գործունէութեան համար ասպարէզներ ունենան, որ կարողանան իրանք իրանց ապրուստը հոգալ, և անկախ լինել բայց տարաբար դարձ, միակ ասպարէզը, որ ուսուցչութիւնն է մեր կանանց համար, այդպիսով փակվում է նոցա առաջ, և մեր կրթված կանայքն էլ, իրանց անկախ քորերին նման, պէտք է տանը նստեն և

բաւականանան միայն երկուստեք զգլխով: Եւ զանազան մանր-մունր բաներով: Ուրեմն էլ ինչով են մնում կնոջ ինքնուրոյնութեան գաղափարը և նրան համեմատ ձգտումները, ուրեմն էլ ինչ միտք ունի երազել աշխատանքի բաժանման մասին՝ երկուստեք ներկայացուցիչներին մէջ, քանի որ, այդպիսով սուսի ներկայացուցիչներին մէջ, քանի որ, այդպիսով զուցէ և անգիտակցաբար, փոքր առ փոքր, ամենաանհիմքի և ամենաանմիտ կարծիքներով են սկսում զեկավարել նոյն իսկ այդպիսի պարզ հարցերում: Ոչ. դպրոցներին դռները անխորի բաց պէտք է լինեն արժանաւոր վարժապետի և վարժուհու առաջ, լինեն նրանք ամուսնացած թէ չամուսնացած,—այդ միանգամայն նշանակութիւն չունի:

Խ. Մ.

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ

Յուլիսի 30-ին Արդէն մայրաքաղաքի լրագրիչներին ձեռ յայտնի է, որ սեպտեմբերի 27-ին ներկայ թվի Գեղարուեստների ձեռնարանում կը տօնվի մեր հռչակաւոր հայրենակից պրոֆէսոր Խ. Կ. Ալազովսկու սկսած յիսնամեայ յօրեկանը: Պետերբուրգի հայոց հասարակութիւնը մտաւոր է մասնակցել տօնաւորութեանը, մատուցանելով յօրեկանին զին ունեցող պարգևներ: Առաջինն է մի արժանիք պնակ (պոլտրա), որի մի երեսի վրա փորագրված կը լինի հայրենի երկրի և Պետերբուրգի հայոց հասարակութեան կողմից կարճած ուղերձը, այդ ուղերձը ստորագրողներին բոլոր աղագանձներով: Ահա ուղերձի պրոէկտը: «Մեծարգոյ Խաչն Կոստանախոյնով: Նորին Կայսերական Մեծութեան թղտուրութեամբ այսօր տօնվում է ձեր գեղարուեստական գործունէութեան յիսնամեակը: Այդ բոլոր յիսուն տարիների ընթացքում, ձեր ամբողջ աշխատանքի կեանքի, ձեր աշխատանքների և համախորհրդային փառքի ընթացքում՝ դուք միշտ եղել էք հպարտութեան առարկայ այն ազգի համար, որից դուք ծագում էք: Անմահ աշխատասիրութիւն, որը միացած Աստուծոյ ձեռ տուած անաղին տաղանդի հետ, չէ սպաւում ձեր մէջ նոյն իսկ ձեր կրտսերական փառքի լրանալով, կարող է մեր դասակներին համար ծառայել որպէս ուսանելի օրինակ, որ հանձնարի կատարեալ ծաղկման համար պահանջվում է սովորել, անընդհատ աշխատասիրութիւն: Պետերբուրգի հայոց հասարակութիւնը, տեսնելով ձեզ գրկելով ամեն օր իր եկեղեցու ծրարներին թուով, սկսած այն ժամանակներից երբ դուք ուսանում էիք Գեղարուեստների Կայսերական Ակադեմիայում, մինչև մեր օրերը,—ամենամեծաւոր վկայ էք ձեր աշխատանքների և ձեր փառքի, և այդ պատճառով նա խնայարարաբար մատուցանում է ձեզ իր չնորհաւորութիւնը

ձեր յօրեկանի առիթով, որով լրանում է աշխատանքի և գեղարուեստի ասպարիզում ձեր անխնայ ծառայութեան յիսնամեակը: Գուք ընդունել ձեր մարմին և արին հայոց աղբիւր, ուրեմն ընդունեցէք Պետերբուրգի ձեր հայրենակիցներին այն գեղարուեստի գործիչները, որով դուք հռչակեցիք ու փառաւորեցիք թէ ձեզ և թէ ձեր ազգութիւնը: Թող մեր համեստ պարզեղ ծառայի որպէս արտայայտութիւն մեր անկեղծ ցանկութիւնների, որ Աստուած դու երկար օրեր պահպանի ձեր կեանքը գեղարուեստի համար: Ս. Պետերբուրգ, 27 սեպտեմբերի, 1887 թվի:»

Երկրորդ ընծան լինելու է այն փայտը, որ կը լրան է մուշտաբէլ անունը և որ գործ է անվում նկարիչներից իրանց աշխատանքի ժամանակ ձեռքի յենման համար: Դա լինելու է սև փայտից, արեւելեան զարդարանքներով արժանիք և էմալից, հետևեալ արձանագրութեամբ՝ «Խ. Կ. Ալազովսկու» Պետերբուրգի հասարակութիւնը 1837—1887 թ. 27 սեպտեմբերի» Երկու առարկաներն էլ մատուցանելու կայ պատուիրել խնդիրով զործարանում և նրանք կարծեման օտաւորապէս 350 ռուբլի:

Ալազովսկու յիսնամեայ յօրեկանի տօնաւորութիւնը լինելու է շատ փառաւոր Շատ քաղաքներից արդէն պատրաստվում են ողջունել յօրեկանին՝ հեռագիրներով, ուղերձներով և պարգևներով: Ալազովսկու ժողովրդականութիւնը, նրա ընդարձակ ծանօթութիւնը Պետերբուրգի բարձր շրջաններին հետ՝ նշանաւոր կերպով կը նպաստեն գործի աջողկուն:

Թագաւոր Կայսրը հրամայել բարեհաճեց կտրել ոսկեայ մեդալ յօրեկանի պատիւներով: Հաղորդակցութեան համապարհների միջնորդը ուղարկում է յօրեկանին երկաթուղային միջնորդական վագոն, որով կերթան Թեոֆիլ Գեղարուեստների ձեռնարանի կողմից պատգամաւորները և կը բնակին Ալազովսկու Պետերբուրգ:

Իր ժամանակին ևս կաշխատեմ գրել այդ լրագրի մասին մի մանրամասն թղթակցութիւն «Մշակի» համար:

Ս. Գարուսիանց

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Հանգուցեալ Յովսէփ Խոմիւրեանցի կտակի զործարկի մնացած յանձնաժողովը Կ. Պոլսից ուղարկել է մեզ տպելու հետեւեալ ազգը: «Սահակ Մեարդեան Գրական Մրցանակաբաշխութիւնը, որ բարեխիտառակ Յովսէփ Խոմիւրեանցի կողմից հաստատված է, պիտի կատարվի առաջիկայ 1888 տարւոյ սուրբ թմարի մնացած յանձնաժողովը իր փութայ հրաւիրել այն հեղինակներն՝ որ ունեն ազգային լեզուաբանութեան (ֆիլոլոգի) և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ ձեռագիր կամ տպագիր, և կը փափագեն մասնակցել մըր-

տուց իր լրագրին: Բայց որովհետև լրագիրը բոլորովին աշխատելու չունէր, այդ պատճառով միայն ծախսեցին նրա վրա. Բօննէր մտադրվեց լաւ տեղ տալ լրագրին և հասարակութեան ուշադրութիւնը դրաւ ղեկի նա: Նա իր լրագրում զիտաւորապէս տպում էր ըզգացմունքները զրգող վէպիկներ և բովանդակ, և հենց դրանով Բօննէր ձեռք բերեց իր այժմեան ահագին հարստութիւնը: Երազարկան գործ սկսելով, նա հասկացաւ թէ ինչքան մեծ նշանակութիւն ունի ընդարձակ և զրաւիչ յայտարարութիւնների տըպագրութիւնը և հենց դրա վրա գործ զրեց իր ամբողջ ընդունակութիւնը: Նրա հրատարակչական ասպարիզի սկզբում Նիւ-Եօրկում նշանակութիւն ստացաւ մի գրող կին, Ֆրանի Ֆէրն անունով, որը, թէպէտ և կարճատև, բայց մեծ ժողովրդականութիւն ունէր, չը նայելով որ շատ աննշան տաղանդ ունեցող մի կին էր: Տեսնելով թէ հասարակութեան տրամադրութիւնը և ճաշակը ղեկի ձր կողմն են թեքված, Բօննէր զիմեց Ֆրանի Ֆէրնին այդ վերջինի համար մի չը լաված ձեռնտու առաջարկութեամբ, այդ գրող կինը շատ փոքր վճար էր ստանում ուրիշ լրագիրներից, այն ինչ Բօննէր խոստացաւ նրա մէջ վէպիկի համար հաղար ղուլար վճարել և վերջերի մի այդպիսի վարմունքը չը պէտք է վերագրել նրա անփորձութեանը կամ մարդասիրական որ և է ձգտումներին. նա միայն իր սեփական շահն ունէր աչքի առաջ: Ֆրանի Ֆէրնի հետ պայման կապելուց յետոյ, Բօննէր գրաւեց լրագիրների կիրաւորեալ

համարների սմբողջ սիւնակներ և իւրաքանչիւր սիւնակի վրա խոշոր տառերով տպել տուեց միայն հետեւեալ երեք նախադասութիւնները. Ֆրանի Ֆէրն «Ledger»-ի համար վէպ է գրում Գ. Ն. Ե. Ե. «New York Ledger»-ը: Կարգադէպ «Ledger»-ում Ֆրանի Ֆէրնի վէպը, որ 1000 դօլլար արժէ է: Ընթերցողներին շատերը այն ժամանակ չէին էլ իմանում թէ ո՞վ է այդ Ֆրանի Ֆէրն, բայց մտածելով, որ հաղար ղուլար չէին վճարել, եթէ Ֆրանի Ֆէրն առաջնակարգ տաղանդ չը լինէր,—բոլորն էլ սկսեցին աւանել Բօննէրի լրագրի: Մեծ և ընդարձակ յայտարարութիւններ Բօննէր միշտ տպել էր տալիս, և դրանով նա հասաւ իր նպատակին, հարստացաւ, բայց նա տարիներով քիչ աշխատեց և հանձնարարող հրատարակութիւն չը գործ զրեց իր «Նէշըր» լրագիրը պաշտպանելու և առաջ տանելու համար: Սկզբում սկսեցին յարձակվել Բօննէրի վրա, որ նա յայտարարութիւններով է գրաւում ամբողջին, և որ զոգ համակրելի միջոց չէ: Ինչ է անում Բօննէր: Այդ ժամանակ Նիւ-Եօրկում սկսվեց հրատարակվել «Harpers Weekly» անունով մի շատ լուրջ շաբաթաթիւթ. Բօննէր կիրաւորեալ լրագիրներում կրկին սիւնակներ գրաւեց և տպել տուեց հետեւեալ յայտարարութիւնները. «Գ. Ն. Ե. Ե. «Harpers Weekly» գեղեցիկ է լրագիրը: Հայտարարութիւնը, ի հարկէ, կարծեց, թէ վերջինեալ լրագրի արժանապատիւ հրատարակիչներն են իրանց լրա-

գրի մասին յայտարարութիւնները տպում, և քիչ քիչ սկսեց ընտելանալ այդ նորաձեռութեան հետ և դադարեց մեղադրել Բօննէրին: Վերջը Բօննէր հետեւեալ սրամիտ միջոցին դիմեց. նա ամենօրեայ լրագիրներում հրատարակում էր մի օր և և հետաքրքիր վէպի առաջին գլխերը, մեծ փող վճարելով դրա համար, և ընդմիջում էր վէպի տըպագրութիւնը ամենաանտաքքի տեղում, իր կողմից աւելացնելով, որ այդ վէպի շարունակութիւնը բացառապէս կը տպվի միայն «Ledger»-ում: Բօննէրի պատերազմը իր նորաձեռութիւնները քննադատողներին և նրա աշխուրդեան վրա նախանձողներին ղեմ դու ևս վերջացած չէր: Բայց նա յաղթող հանդիսացաւ: Սկսեցին, օրինակ, խօսել, որ «Ledger» լրագրում անչափ հեղինակներ զատարկ վէպեր են տպվում, չարժէ դրանց կարգաւ... Բօննէր չը կամեցաւ տանել այդ վերաբերանքը և աշխատեց ամենալաւ գործիչներին գրաւել ղեկի իր լրագիրը. «Ledger» լրագրի աշխատակիցների թւում սկսեցին մտնել ամենալաւ գրիչ և հռչակ ունեցող անուններ: Բօննէրի գործը դրած միջոցները նշանաւոր զըրոյներին ղեկի իր լրագիրը գրաւելու համար, շատ սրամիտ են: Այդպէս, օրինակ, Բօստօնում այն ժամանակ ապրում էր Խոլմար Լիլբրէտ անունով մի պարոն, որ հին չիլոյի զիպոմատ էր և բարձր զիւր ունէր հասարակութեան մէջ: Լիլբրէտ նախապահ էր այն ամբողջացի տիկինների ընկերութեան, որի նպատակն էր փող հաւաքել վաշիզատի տունը և դամբարանը գնելու և

պահպանելու համար: Բօննէր առաջարկեց Լիլբրէտին գրել,—ի հարկէ առանց վճարի, որպէս և պատշաճ էր բարձրատիման անձին,—մի շաբթ յօդուածներ, որի փոխարէն, նա պարտաւորվեցաւ 10,000 դոլլար տալ յօդուած նոյն ընկերութեան, որի նախապահն էր Լիլբրէտ: Վերջը Բօննէր զիպոմատիկան զանազան խորանանկութիւններով կարողացաւ գրաւել ղեկի իր լրագիրը ամենաբարձր յարգված պատմաբան Ջօրջ Բանկրօֆտին և լրագրութեան երկու ամենամեծ ատղեներին՝ Բօննէր-Տօրը և Գորաս Գրիլին: Ի լրումն ամենայնի, նա մինչև անգամ կարողացաւ իր լրագրի մէջ գրել տալ մեծ ժողովրդականութիւն ունեցող և սրամիտ քարոզիչ Հէրի Ուօրդ Բիչէրին, զիմելով նրան և խնդրելով, որ «Ledger» լրագրի համար մի բօման գրէ: Փարոզիւր իր կեանքում երբեք բօման չէր գրել, բայց որովհետև զիպոմատի Բիչէրի ծախսերը միշտ աւելի էին նրա մեծ եկամտանքից և նա ինքն, հասարակութեան այդ սիրելին, միշտ խրված էր մեծ պարտքերի մէջ, իսկ Բօննէր բօմանի համար առաջարկում էր 20,000 դոլլար, այդ պատճառով Բիչէր համաձայնվեցաւ և նրա «Norwood» բօմանը, որ տպվում էր լրագրի սիւնակներից, կարգում էին համարեալ բոլոր ամբողջացիքը:

Բօննէրի լրագիրը հարիւր հազար օրինակներով է տարածվում, և նա ինքն մինչև այժմ ևս մեծ խնամքով հսկում է իր գործի վրա: Մասնաւոր կեանքի մէջ նրա միակ թուրութիւնը ձիւներն են կազմում: Առաջին եօթը ձիւները, որ նա

ցանակաբաշխութեան, փութան ուղարկել այն առ. Սրբազան Պատրիարք Հայրն ի կօնադատութեան. մինչև առաջիկայ յոշնակարի սկիզբն: Տըպագիր երկասիրութիւնը հարկ է որ երեք օրինակ ուղարկվեն»

ՍՂԱՍԽԻՑ մեզ գրում են օգոստոսի 3-ից հետեւալը: «Անցեալ ուրբաթ օր ժամի 10-ին, մի հայ մշակ, Գառապար անունով, որ բանում էր մի որմնադրի մօտ, հողը քանդելու ժամանակ մնաց հողի մի անագին կոյտի տակ, որը փրկելով ինդոզեց ողորմելուն: Երբ հողի տակից հանեցին դիակը, սպանվածի գլուխը կատարեալապէս ջախջախված գտան: Մեռած հայի հետ բանում էր և մի վրացի մշակ, բայց սա կարողացաւ ազատվել մահից: Հողի կոյտի մի մասը սրան էլ դիպաւ, բայց չը ծածկեց նրան»

ԿԱՍ ԳԻՒԼԻՑ մեզ գրում են: «Այս քանակում էր երեք ամիսը և մենք դեռ ևս քահանայ չունենք: Քանի անգամ մենք դիմած ենք Նուխու հողեր կառավարութեանը, գոնէ ժամանակաւոր մի քահանայ մեզ համար նշանակելու, մինչև նորի վերջնականապէս նշանակելը, բայց մեր բոլոր խնդիրքները մնում են ապարդիւն: Պատահում է ծնունդ, մահ և կամ պատահել իրականում մնում են չը մկրտված, պատկերներ յետաձգվում են, իսկ նմանակները մնում են օրերով չը թաղած, մինչև մի տեղից քահանայ են բերում: Բայց այդքան առատակարգ ծախան էլ չէ կարող անել»

ՍԻՄԵԼԻՐՈՒԹԻՑ մեզ հաղորդում են յուլիսի 26-ից հետեւալը: «Կերասան Աղաման և տիկին Զաքէլ ալմա Սիմեֆթօպօլուն են և ժողովրդի խնդիրքին համաձայն ուղարկ են մի քանի ներկայացուցիչներ տալ տեղիս սիրողների մասնակցութեամբ»

ԿՈՅՈՐԻՑ մեզ գրում են: «Կարելի է կարծել որ ամառը նոր է սկսվում: Օգոստոսի 5-ի սերտից և օգոստոսի 7-ի արեւակի խաւարումից յետո՛ւ՝ սկսվեցան այստեղ ալիսի տաք, նոյն իսկ չոր ամառային օրեր, որ դեռ տեսած չենք ներկայ թիւ ամբողջ ամառվայ ընթացքում: Երբ օգոստոսը շատ տաք էլ լինի»

ՎԵՐՋԻՆ օրերի յորդ անձրևների պատճառով Անդրկովկասեան երկաթուղու գիծը մի քանի վրանաներ է կրել, այնպէս որ, ամսիս 7-ին, այդ երկաթուղու թօլուղ և Աղստաֆա կայարանների մէջտեղում գտնված կամուրջը քանդված լինելով, գնացքը կանգնում է ճանապարհին, և ուղևորները ստիպված են ոտով անցնել մօտ մի վերստ տեղ, իրանց պայուսակները և իրերը իրանց հետ վերցնելով:

Գնել է, նստել են նրան, ինչպէս ասում են, մօտ 300,000 դոլար:

Բայց Բոննէր մի և նոյն ժամանակ բարեգործական նպատակներով անագին գումարներ է նուիրում. նա նորերում 50,000 դոլար նուիրեց իր ծնական եկեղեցուն և միշտ մեծ գումարներ է նուիրում ուսումնարաններին և հիւանդանոցներին օգուին:

Իր ժամանակին մի չէ իսկ ցիրկերի անտրըպլենեօր ամբերիկացի Բարնումի անունը, որը, երեք տարի առաջ տրամալծեան մէջ զցեց ամբողջ Լոնդոնը, որովհետեւ այնտեղի կենդանաբանական այգուց գնեց և Ամերիկա տարաւ. անգլիացիների սիրելի (Ջէմսօ) փիղը, իսկ յետոյ ամբողջ Անգլիային և Ամերիկային զբաղեցնում էր լրագրական տեղեկութիւններով Սիւսմուս իր գնած սըրբազան սպիտակ փղի մասին, որին պէտք է Ամերիկա բերէին քուրմերը, իսկ վերջ ի վերջոյ յայտնվեցաւ, որ արագան փիղը քարեգիր զոյն ունեցող, բայց սպիտակ ներկած հասարակ պլէյնթիներից է: Մի խօսքով, Անգլիան, Ֆրանսիան և Ամերիկան միշտ հետաքրքրվել են և շարունակում են հետաքրքրվել Բարնումի ձեռնարկութիւններով:

Ֆիննէյ Տէյլօր Բարնում—իսկական ամերիկացի է: Տարիքով Բարնում ծեր է, բայց իր եռանդով և աշխոյժով շարունակում է երիտասարդ մարդ լինելը. չը կարողացան ջլատել նրա ուժերը այն օրը որ ժողաւրդութիւնները և աշխատանքները, որ նա ունեցել է իր երկարատեւ կեանքի ընթացքում: Որպէս և շատերը ամերիկացիներին, որոնք հա-

կատկովի մահից յետոյ «Mosk. Вѣдомости» լրագիրը, ինչպէս լսել են Պետերբուրգի լրագիրները, գտնել էր հրատարակվի Գ. Խովայսկու իրմբագրութեամբ, եթէ միայն լրագիրը այն պրօգրամայով հրատարակվի, ինչ պրօգրամայով որ հրատարակվում էր Կատկովի ժամանակ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—«Արեւելք» լրագիրն գրում են որ վարդապետը մեծ կոտորած է անում Մուշի մէջ և նրա շրջակայքում: Ոչ թէ միայն մանուկներ և պատանիներ, բայց և մինչև իսկ հասակաւոր անձինք զոհ են գնում այդ անտիւն, որ տարածված է Մուշի կողմերում երեք թէ չորս ամսից ի վեր: Գրեթէ ամեն տուն քաղաքում ունի իր կորուստը: Լրագիրը ասելաճցում է որ այդ կողմերում շատ անգամ է պատահել վարդապետը, բայց երբեք այդքան կոտորած ու անքր զոհած չէ, որքան այս տարի: Ախտի երեւոյթ մասամբ վերագրում են այս տարւայ օդի արտասովոր տաքութեանը: Այս տարի Հայաստանի այս կողմերում շատ չոր է անում, մեծ չորութիւն և երաշտութիւն է տիրում, այնպէս որ երկիւղ են կրում թէ հունձը այս տարի անաջող կը լինի: Արմաղիների գնեք արդէն բարձրանում են Տիգրանակերտի կողմերում և այդտեղից շարունակ երկիւղալի լուրեր են հասնում:

—Խաւարկան նոր միջնաւորը եւրօպական մի քանի լրագիրներին շրջանում խօսելով եւրօպական խաղաղութեան մասին, այն միայն է յայտնել, որ ինքը ամենայն ջանք կը թափի պահպանելու այդ խաղաղութիւնը: Կրիսպի շատ վնասակար է համարում ամբողջ Եւրօպայի համար Ֆրանս-գերմանական պատերազմը, և այդ պատերազմի առաջն առնելու համար, Կրիսպի կարծիքով, պէտք է որքան կարելի է ամրացնել գերմանա-աւստրօ-խաւարկան դաշնակցութիւնը:

—Ալանիայում միջնաւորական ճգնաժամ է, և սպասում են, որ այժմեան միջնաւորութիւնը տեղ կը տայ մի նոր միջնաւորութեանը:

—Սօֆիայից հեռագրում են, որ Բ. Գուռը պատասխանեց Նիքոլայի պրինցի հեռագրին, յայտնելով, որ օսմանեան կառավարութիւնը պրինցի Բոլղարիա դաւումն չէ համակրում:

—Այս օրերս հրատարակվեցաւ անդլիական «Կապուտ գիրքը», որից երևում է, որ Մեծ-Բրիտանիայի կառավարութիւնը բոլորովին մոռալութիւն չունի հեռանալ Եգիպտոսից, մինչև որ այնտեղ չի հաստատվի իրենի այն դրութիւնը, որի վրա ակնարկել է Անգլիան իր դաշնագրի մէջ:

—Ալանիայում նորից երևան են եկել յեղափոխական շարժումներ. կառավարութիւնը խիստ

րտացել են, մեծ անուն և նշանակութիւն են ստացել միայն իրանց ընդունակութեան, եռանդի և անդուլ աշխատանքի շնորհիւ, Բարնում ծրնվեցաւ դիւղում և իր կեանքի մանկական տարիները անցկացրեց հայրական դաստակերտում, ստանալով իր հօրից օրական տասն սէնտ գուլթանի մէջ լծված ձին քշելու համար. Իւրբաքանիւր յուլիսի 4-ին և ամերիկական ազգային տօնակում բուլթեան ուրիշ օրերը փոքրիկ Բարնում գընում էր հարեան քաղաքը և օգուտով ծախում էր այնտեղ իր ձեռքով շինած քաղցրեղենները: Նիւ-Եօրկ առաջին անգամ նա գնաց որպէս խաշնարած, տասն և հինգ տարեկան հասակում նա արդէն զբաղել տեղ ունեց, և շաքարեղան 6 դոլար լար ուժով էր ստանում: Տասն և ինն տարեկան եղած ժամանակ նա արդէն պատկած էր, և այդ բանում ևս նա գնաց գործնական ամերիկացիների մեծամասնութեան շաղկով որոնք, չը նայելով ոչ մի արդեւքին և ազգատութեանը կամ վաղ են պատկում, կամ, նուիրելով իրանց կեանքին ամենալաւ ժամանակը փող ձեռք բերելուն, մնում են ուրիշ ոչինչ չէ հետաքրքրում, բացի զործերը և փողը: Քէֆը և անբարոյական կեանքը համարեա անձանօթ են Նիւ-Եօրկից զուրս գտնվող երիտասարդութեանը, և նոյն իսկ Նիւ-Եօրկում անբարոյականութիւնը երիտասարդութեան մէջ մըտել է Եւրօպայից, ուր գնում են բարձր դասին պատկանող երիտասարդները ճանապարհորդելու կամ կատարելագործվելու համար:

միջոցներ է ձեռք առել այդ շարժումները ճնշելու համար:

—Իւրանդիայից շարունակում են արտրել այն կապաւառու զիւղացիներին, որոնք անկարող են վճարել կապաւարումը: Այդ արտրաւքի ժամանակ տեղի են ունենում կռիւներ և սպանութիւններ:

—Վիէնայից հեռագրում են, որ Կ. Պօլսի բօլղարական Լիգարիւր Կօրուրդի պրինցին յիշատակարան ուղարկելով՝ հրաւէր է կարգում աջակցութիւն չը ցոյց տալ նրան:

—Կ. Պօլսից, օգոստոսի 3-ից հեռագրում են մայրաքաղաքի լրագիրներին. «Երեկ Սկուլթարում հայ-յունական թաղում հրեհն պատահեց: Կրակի ճարակ դարձան մօտ 1,200 տուն, որոնք մեծ մասամբ փայտաշէն էին: Այդպէս նոյնպէս երկու եկեղեցի՝ մէկը հայոց, միւրը յունաց: Մարդկանցից ոչ ոք չէ մնաւել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԹԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի 1887/8 ուսումնական տարւայ սկզբից մեծացնվում է հետեւալ դպրոցների աշակերտութիւնների ուսման վճարը.— Պետերբուրգի Կօրմենսկայա և Պետրօվսկայա դիմաշխարհների աշակերտութիւնները՝ մինչև 90 ռուբլի. գիմնաշխարհի կից գտնվող մանկավարժական կուրսերի մէջ եղողները՝ մինչև 100 ռուբլի. Մօսկվայի բոլոր դիմաշխարհներում՝ մինչև 100 ռուբլի. Կիւլի—Ֆրանցուկէնսկայա և Կիւլի—Պօլսկայա իգական դիմաշխարհները նոր մանուկների համար 1885 թւին որոշված 55 ռուբլի ուսման վարձը պէտք է վերցնել և այդ դիմաշխարհներում եղող բոլոր աշակերտութիւններից:

ՆԻՃՆԻՑ-ՆՈՒԳՈՐԾԻ, 7 օգոստոսի: Տօնավաճառը միւս տարիների հետ համեմատ թույլ է գընում. մանուֆակտուրային ապրանքները միմիայն Անդրկովկաս և Միջին-Ասիա են գնում: Սիւբիլի համար աւելի քիչ է գնում, քան անցեալ տարիներում: Նախկին արտահանութիւնների վաճառքը անաջող է, առնուցինքն գնեք չեն բարձրացնում. երկաթի աւելի պահանջ կայ. աղը վաճառվում է ցածր գներով, մեծ մասամբ վճարումների յետաձգումներով. ձուկը անցեալ տարիների գինը ունի. պահանջը չափաւոր է. ապառիկ վաճառքներ լինում են. պարսկական ապրանքներ՝ ցարեն և մրգեր՝ անցեալ տարւանից աւելի քիչ են բերված, իսկ գնեք անցեալ տարիներից աւելի բարձր են. պահանջը սովորական է. բամբակի, բուրդի, հում ապրանքների և կաշուեղէնների գընեքը առ այժմ որոշ չեն. տօնավաճառ մինչև այժմ ամբողջ քանակութիւնը չէ բերված: Աւստրական շինութիւններում և ուրիշ շատ տեղերում շատ կրպակներ չեն վարձված:

Քոստ տարեկան հասակում արդէն ընտանիքի տէր դառնալով, Բարնում ապրում էր տնեակները վարձով տալով, իսկ մինչև 24 տարեկան դառնալը նա մօտ տասն երկու դանազան պարամունքներ փորձեց: Քոստ և հինգ տարեկան եղած ժամանակ նա առաջին անգամ գտաւ իր կողման արժանի գործ. նա պատահմամբ գնեց մի պառաւնեգործին, որը, որպէս հաւատացնում էին, 160 տարեկան էր: Բարնում այդ պառաւի համար հազար դոլար վճարեց և սկսեց մանածել դանազան տեղեր և ցոյց տալ հասարակութեանը: Պառաւ կէս տարի էլ չապրեց, բայց Բարնում այնու ամենայնիւ վնաս չարաւ, և այդ ժամանակից նա սկսեց պահել դանազան թանգարաններ և տեսարաններ, և Բոննէրի նման, փող և հնարագիւտութիւն չէր խնայում հասարակութեան ուշադրութիւնը գրաւելու համար: Բարնում, իր կեանքի ընթացքում, երեք կամ չորս մեծ հարստութիւն ձեռք բերեց, մի քանի անգամ մանկապառն և երեք անգամ կորցրեց իր ամբողջ զըրամաւորութիւնը հրեհների պատճառով: Նա կամ ճանապարհորդում էր Միացեալ-Նահանգներում և Եւրօպայում, այդպէս անուանված Թօմաս Թոմը դարմանալի թղթակին ցոյց տալով հասարակութեանը, կամ հրաւիրում էր Ամերիկա հռչակաւոր երգչուհի Ջէնի Լինդին, որին երբեք ինքը լսած չէր, և դրանով կէս միլիօն դոլար փող աշխատեց այն կօնցերաներից, որոնցով նա զօրացնում էր ամերիկացիներին 1850—1851 թւերին: 1856 թուին դարձեալ մանկանալով, Բարնում կրկին

ՍՈՏԻԱ, 7 օգոստոսի: Գերմանական հիւպատոսը իր յարաբերութիւնները ընդհատեց բոլգարական կառավարութեան հետ:

ՖԻԼԻՊՊՈՒ, 7 օգոստոսի: Երեկ հասաւ այստեղ Կօրուրդի Ֆերդինանդ պրինցը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի: Վատ եղանակի պատճառով, արեւակի խաւարման գիտնական հետազոտութիւնները (Ռուսաստանի համարեա ամեն տեղերում չաղողիցանալը) Կլինում պրօֆէսօր Մենդելէեւի կատարեալ խաւարումից երկու օրպէս առաջ միայն կարողացաւ բարձրանալ օդապարիկով, 230 վերստ տարածութիւն անցնելով: Նա ողջ և առողջ իջաւ Կալիպոլի մօտ: Տըվէրում օդապարիկը բարձրացաւ կատարեալ խաւարումից 7 օրպէս առաջ, բայց, ամպերի թանձր չերտի մէջ ընկնելով, շուտով իջաւ քաղաքի շրջակայքի մօտ: Այդ օդապարիկով բարձրացող Ջվերնիցէլ և Ջվելցիկի ոչինչ չը կարողացան դիտել: Կրամսոեարսկում աղողիցեալ արտանկարել և լուսանկարել թագը: Բացի դրանից տեղեկութիւններ են ստացված խաւարման աղող հետազոտութեան մասին Նիօֆէրկասկում, Եկատերինբուրգում, Իրբիտում, Տօմսկում և Նիւշիւսկում:

ՀՌՈՄ, 8 օգոստոսի: Մասսօվում խալական զօրքերի հրամանատարի տուած տեղեկութեանց համեմատ, արխիւնցիները աղատեցին իրանց մօտ գերված խալացի վերջին ճանապարհորդին, որը և Մասսօվա եկաւ:

ԼՕՆԴՈՆ, 8 օգոստոսի: Կառավարչական հրատարակված շրջաբերականը յայտնում է իւրանդական ազգային միութիւնը որպէս պետութեան համար վնասակար ընկերութիւն և իրադրութիւն է տալի իւրանդիայի փոխադրային հալածել միութիւնը այն տեղերում, ուր նա կը գրգռի ժողովուրդը սպառնալքներով և բռնութիւններով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: Պետերբուրգ վերադառնալով, պատերազմական միջնաւորը մտաւ պաշտօնավարութեան մէջ:

ՄՕՍԿՎԱ, 9 օգոստոսի: Երեկ երեկոյեան Կլին վերադարձաւ պրօֆէսօր Մէնդելէեւի: Արեւակի խաւարման ժամանակ՝ նա ամբողջ 15 օրպէս բարձրացաւ՝ մինչև 3,500 մետր բարձրութեան վրա. նրան աղողիցեալ տեսնել արեւակի բակը, որը շուտով ամպերով ծածկվեցաւ. նա նկատեց ամպերի վրայով անցնող շուաքը և փորձեք արեց ջերմաչափի և ծանրաչափի վրա: Ամբողջ մի ժամ պրօֆէսօր Մէնդելէեւի երկիրը չէր տեսնում. նրա գլուխը չէր պտտում, և ինքը իրան լաւ տիրապետում էր: Որպէս զի շատ չը բարձրանայ, պ. Մէնդելէեւի բաց արեց կատարել և սկսաւ ցած իջնել մի ընդարձակ դաշտի վրա կալեաղի մօտ: Տեղացի գիւղացիները նկատեցին ցածրացող գոնդը և յարգելի օդադնացին ընդունեցին սիրալի կերպով. գոնդը ցածրացաւ յաջող կերպով: Գիւղական ատենախի անդամ՝ Սալտիկով ամենից առաջ այդ մասին հեռագիր լըմեց Կալեաղին: Պրօֆէսօր Մէնդելէեւի կատարե-

անգամ իր թղուկով գնաց Եւրօպա և պտտեց ամբողջ Անգլիան, ամեն տեղ հրապարակական դաստիարակութիւններ կարգաւորվ Վիոդ ձեռք բերելու արուեստի մասին: Չորս տարւայ ընթացքում տաժանակիր աշխատանքներին դատապարտված մարդու պէս աշխատելով, Բարնում կրկին հաւաքում է բաւականաչափ փող թանգարան գնելու համար և շուտով հարստանում է, չը նայելով որ 1861—65 թուերի պատերազմի ժամանակ էր: 1865 թուին նրա թանգարանը կրակի զոհ գնաց, մի և նոյնը կրկնվեց նրա հետ և 1868 թուին, բայց Բարնում՝ որպէս Ֆէնիքս, իր զարմանալի թանգարանների մոլորեց և աւերակներից կանգնում էր առավելանից աւելի գեղեցիկ դրութեան մէջ, և այժմ նա 3000,000 դոլարի կարողութիւն ունի և շատ նուիրաբերութիւններ է անում յօգուտ իր հայրենի քաղաքի զբաղաւրանների և բարեգործական հիմնարկութիւններին: Այժմ Բարնում ընկերացրեց իրան «Great Loedon Show» ցիրկը, տարեկան 200,000 դոլար է ծախսում յայտարարութիւնների վրա և իր խաւարը, մարդկանց, ձիաներին և զաւանանոցը մէկ տեղից միւր տեղափոխելու համար ծախսում է օրեկան հնդից մինչև վեց հազար դոլար:

Բարնում ժողովրդականութիւնը շատ մեծ է ամբողջ դաշնակցութեան մէջ և նա ունի շատ յարգողներ, որոնք համարում են նրան տիպար ընտանեկան և հասարակական բոլոր առաքինութիւնների:

լապէս առողջ է, թէն մի փոքր յոգնած: Տեղա-
կան իշխանութիւնը մեծ աջակցութիւն ցոյց տը-
ւեց անվերջ ճանապարհորդին: Պրոֆէսոր Մէն-
դէլեյն մտադիր է իր հետազոտութիւններէ ման-
րամանութիւնները հաղորդել ֆիզիկո-քիմիական
ընկերութեան ժողովում:

Նիժնի-Նովոգորոդ, 9 օգոստոսի: Պաշտօնա-
կան տեղեկութիւններէց երևում է, որ տօնավա-
ճառը և բոլոր առևտրական գործերը անհամե-
մատ աւելի լաւ են, քան անցեալ տարիներում:

ԽԱՐԿՈՎ, 9 օգոստոսի: Ուսանողները տօնավաճա-
ռը սկսեց իր կանոնաւոր գործողութիւնները:
մեծ քանակութեամբ ապրանք է բերվում, գնող-
ները սկսել են գալ, երևում է, որ մանուֆակ-
տուրային ապրանքը լաւ կը վաճառվի: մօտ
30,000 պոլո չը մաքրված բուրդ կայ: Եղանակը
չափ հոգնային է և խանդավառ է հացաբոյսերի
հնձելուն:

ԲԵՐԼԻՆ, 9 օգոստոսի: Պետերբուրգից այստեղ
եկա Կ. Պոլսի ուսանող զեսպան Նիկիտա, որը,
լուրերին նայելով, մի քանի օր այստեղ կը
մնայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 7-ին

Ռուսաց 1 բուրլ 1 լոնդոնի վրա արժէ	213/32	պէնս.
— — — — —	1791/4	պէնս.
— — — — —	2221/2	սանս.
Ռակի — — — — —	9	32 Կ.
Մաքսային կուպոններ — — — — —	182	—
Արժաթ — — — — —	1	29
Բորսային դիվիդենդներ — — — — —	45/8	61/2%
Պետական 5% տոմս 1-ին չըջանի	100	12
— — — — —	2-րդ	99
— — — — —	3-րդ	99

— — — — —	4-րդ	99	25
— — — — —	5-րդ	99	12
— — — — —	6-րդ	—	—
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին չըջ.	—	99	—
— — — — —	2-րդ	99	—
— — — — —	3-րդ	98	—
Ներքին 5% առաջին փոխառութ.	—	272	50
— — — — —	—	253	75
51/2% ընտան — — — — —	—	102	25
Ռուսաց բէնտա — — — — —	—	193	25
Ներքին 5% փոխառութ. 1-ին չըջ.	—	166	25
— — — — —	—	99	25
5% զրաւական թղթեր կաշուած.	—	—	—
— — — — —	—	166	—
— — — — —	—	98	62
51/2% զրաւական թղթեր խնայմանի	—	98	87
— — — — —	—	103	—
6% զրաւական թղթ. խնայմանի կաշուած.	—	103	—
— — — — —	—	102	75
— — — — —	—	102	50
— — — — —	—	102	37
— — — — —	—	102	50
— — — — —	—	102	75
— — — — —	—	102	50
— — — — —	—	102	50
— — — — —	—	27 և 43	99
— — — — —	—	18 և 43	99

Վ. Երմակով-Կամսկի բանկի ակցիաները 735 > —
Ռուսաց երկաթուղիների զխաւ. ընկ. 272 > —
Բիւրեղակ-Վ. Երմակով ընկ. 84 > 50
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ-
դացիները. 95 > 87
Մոսկովայի քաղաք. օրվ. քաղաքային. 96 > 75
Օդեսայի — — — — — 95 > 87
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. 83 > —
Նոր փոխառութիւն. 83 > 75
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը
կենդանանում է:

Խաղաղութիւն-հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մի ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ կամենում է երկու սեռի զինուորիկ երիտաներ պահել: Զան-
կացողները հասցնեն կարող են խմանալ «Մշակի» խմբագրատանը: 1—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Զորքը շաբաթի, օգոստոսի 19-ին, ՄԵՍԶ (MEUSE) շաբաթը, նաւապետ
ՏԻԲԱԼ (THIBAL) շաբաթ կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլսի և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործադիրներին, Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնոնին, նախկին Արժ-
րուների գալլերէում, № 103. 3—4

ԿԻՆԲԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԽԱՆԱԿԵԱՆՅ Ընդունում է հիւանդներին, երեկոյեան
ժամը 6—7, իր ընակարանում, Ստարո-Արսենաւայայ փողոց, № 20, տուն Բաքրաձէի:
4—6 (Կ. Ն.)

ԱՊԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Բարձր ֆօն ԿՈՒՉԵՆԲԱՆԻ պատրաստում է
ԼԱՄՊԻ ԱՊԱԿԻՆԵՐ
և լամպի ուրիշ պարագաներ, չափաւոր գներով: Մանրամասնութիւնները կարելի է ի-
մանալ Սիմենս և Գալվէ գործակալութեան գրասենեակում, Թիֆլիսում:
4—10 (Հ. Ե.)

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր
ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մանաւորական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Առևտրողները ստանում են ատու և ստատու և ր:
Առևտրի առարկայք տըրա են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առև-
տրական թուղթերութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուղթերութիւն համընդհանր վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6)
Առևտրական և մարհաշի կանոնադրութիւն, և 7) զեղապարտութիւն:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունութիւնները օգոստոսի
25-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնա-
կարանում, Սոջալուում, Լաբորատորիայի փողոցի վրա, Յովհաննէս Ղորանեանի
տանը, № 11: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԵՍ կղբ. Ծո-
վիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտա-
րաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին—Վ. Պետիշ, Ս. Ս. Մալ-
ՅԵԼԻԱՆԿՍԿԻ:
7—20 (Կ. Ն.)

ԼՈՅՍ ՏԵՍՏԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՂՈՒՈՎ
»ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ«
ԿՈՎ. ԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Կինն է 30 կոպէկ:
Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և հետեւեալ տեղերում, Թիֆլի-
սում՝ Կենտրոնական և ուրիշ գրավաճառանոցներում, Տէր-Յովսէփեանի ծխա-
խոտի խանութում (Կովկաս հիւանդոցի տակ), Միրզա Տէր-Գրիգորեանի ծխախո-
տի խանութում (Սիմոնի փողոցի վրա), ԵՐԵՎԱՆԻՍ՝ Կ. Գառաւազեանի խանու-
թում, ԲԱԳԻՈՒՍ՝ Շիրազեանի խանութում, ԳԱՆՁԱԿՈՒՍ՝ Աղայեանի խանու-
թում, ՇՈՒՇԻ՝ Գաբեան եղբայրների գրավաճառանոցում, ՆՈՒԻՆ՝ Ուսուցիչ Ն.
Դաւթեանի մօտ, ԱԼԷԲԱՍՆԻՍ՝ Վ. Կահապեանի խանութում: Օտարաքաղա-
քացիք պէտք զիջքը ստանալու համար պէտք է դիմեն հետեւեալ հասցեով.
Тифлисъ, Х. Маламундзу, въ редакцію „Мшакеъ“, 7—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՍՈՂՈՒՄՆ ԵՂԻՎԱԳՐԱՆԻ
«ԱՆԳՐԱԿՈՎ ԿԱՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԳԻՐԱՅԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՍԻՐԵԼՈՎ
ՆԻԻԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ»-Ի (СВОДЪ МАТЕРІАЛОВЪ ПО ИЗУЧЕНІЮ ЭКОНОМИЧЕСКАГО БЫ-
ТА ГОСУДАРСТВЕННЫХЪ КРЕСТЬЯНЪ ЗАКАВКАЗСКАГО КРАЯ) առաջին հատորը, որը
բովանդակում է հետեւեալը: 1) Երևանի նահանգի զիւղական համայնքի վարչական-տնտեսական նը-
կարագրութիւնը և 2) Գիւղական հողատիրութեան տեսակները Բաթումի նահանգում:
ԳԻՐԷՆ Է 3 ՐՈՒՐԻ
Իսկ ուսուցիչների և ուսանողների համար 2 բուրլի ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի»
խմբագրատանը: 5—6

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)
Կոնստանտին Պ. ՇԵՆԱՆՏԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԱՆ, և ունենա-
լով ուղղակի յարաբերութիւններ յառաջիկայի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆարքիանե-
րի հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետեւեալները՝
մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի միացորդը, բուրդ, բամբակ, ցորենիղէն, նաւթ
և ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրո-
պայում: Զանձնարարութեամբ կընդունի դարձեալ առնել Եւրոպայի ամեն տեսակ ապ-
րանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնառու պայ-
մաններով փող կը տայ ի հաշիւ: մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հաս-
ցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie)
MILAN (Italia).

Գ. ԿԵՐԷՐԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԱԳԱՋՆՈՒՄ
Հերթիւների ֆարքիայի միակ աղէնոր մօտ, Կով-
կասում, Միլանի փողոցում, № 84, ստացված են
մեծ քանակութեամբ
ՀԵՐՈՓՈՆԵՐ
Կատարկապարտված, դուրեկան ձայնով, նոյնպէս լաւ
ընտրութիւն նոտաների Հերթիւների համար: Օտարա-
քաղաքացիների պահանջները ճշգրտվում և առա-
ջին փոստայով են կատարվում: Նոտաների կատա-
լոգները թէ Հերթիւների և թէ Արխիտոնների հա-
մար, ըստ պահանջման ուղարկվում են անվարձ:
20—20

ԾԽԱՆՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ
ԲՈՍՏՈՎ (ԳՏԻՎ ԿՐԱ) ԳՈՐԾԱՐԱՆԱՏԻՐԵՐԻ
ԱՍԼԱՆԻԴԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ
Մագալինը Գլխորդակա փողոցում, Գալաթարովի տանը, Թիֆլիսում, պատիւ ունի յայտ-
նելու պ. պ. ԾԽԱՆՈՑԻՆ և ՎԱՃԱՌՎԱԿԱՆՆԵՐԻՆ, որ փետրվարի 15-ից ներկայ թվի մեջը
բաց արինք ծխախոտի առևտուրը, որտեղ կարելի է ստանալ ԾԽԱՆՈՑԻ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ա-
մեն անակները մեր գործարանից բերված: Մեր ԾԽԱՆՈՑԻ իր առանձին յատկութիւնների
համար, լաւ համ, միզմութիւն և դուրեկան արօժատ, վայելում է երկարամեայ հաւակ և
մեծ տարածութիւն Ռուսաց կայսրութեան և արտասահմանի շատ քաղաքներում:
Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասում մեր ֆարքիայի ծխախոտի արդիւնները մի-
ջ և այժմ յայտնի չէին, այդ պատճառով մենք բաց արինք ծխախոտի մագալինը, ցանկանա-
լով այդ մեր արդիւնները երկրի մէջ մտցնել:
Խոն աբ հաւար խնդրում են ինք և ինք պ. պ. Ծխողներին և վաճառականներին ան-
տես չառնել ծանօթանալու մեր ֆիլիայի արդիւնների հետ:
Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փոստի
ծախար մագալինի վրա է: Պրէյսկալարանները ցանկացողներին անվարձ են ուղարկվում:
Պ. Պ. ՎԱՃԱՌՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԶԻՋՈՒՄ:
ԱՍԼԱՆԻԴԻ Եղբայրներ 20—25